Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական



Հավատարիմ բարեկամներ

Ամենազույն պարգևներից մեկը, որ Փրկիչը կարող է տալ, մեզ «բարեկամներ» կոչելն է: Մենք գիտենք, որ Նա սիրում է կատարյալ սիրով Իր Երկնային Հոր բոլոր զավակներին: Դեռ ավելին, նրանց, ովքեր հավատարիմ են Իրեն իրենց ծառայության մեջ, Նա վերապահում է այս հատուկ տիտղոսը: Դուք հիշում եք բառերը Վարդապետություն և Ուխտերի 84-րդ բաժնից. «Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, իմ բարեկամներ, քանզի այսուհետև ես ձեզ կոչելու եմ բարեկամներ. Նպատակահարմար է, որ ես տամ ձեզ այս պատվիրանը, որ դուք դառնաք ճիշտ ինչպես իմ բարեկամներն այն օրերին, երբ ես նրանց հետ էի, և ճամփորդում էի՝ ավետարանն իմ զորությամբ քարոզելու» (ՎևՈւ 84.77):

Մենք դառնում ենք Նրա բարեկամները, երբ ծառայում ենք ուրիշներին՝ հանուն Նրա: Նա մի կատարյալ օրինակ է այնպիսի բարեկամի, ինչպիսին մենք պետք է դառնանք: Նա ուզում է միայն ամենալավը Իր Երկնային Հոր զավակների համար: Նրանց երջանկությունը Իր երջանկությունն է: Նա զգում է նրանց վիշտը, ինչպես Իր սեփականը, որովհետև Նա վճարել է գինը նրանց բոլոր մեղքերի՝ վերցնելով իր վրա նրանց բոլոր թուլությունները, կրել է նրանց բոլոր հոգսերը, զգացել է նրանց բոլոր փափագները: Նրա շարժառիթները մաքուր են: Նա չի փնտրում ճանաչում Իր անձի համար, այլ տալիս է ամբողջ փառքը Իր Երկնային Հորը: Կատարյալ բարեկամը, Հիսուս Քրիստոսը, ամբողջովին անեսասիրաբար է առաջարկում երջանկություն ուրիշներին:

Մեզնից յուրաքանչյուրը, ով մկրտության ուխտ է կապել, խոստացել է հետևել Նրա օրինակին, կրելով մեկը մյուսի բեռը, ինչպես Նա կաներ (տես Մոսիա 18.8):

Հաջորդ մի քանի օրերի ընթացքում դուք հնարավորություն կունենաք լինելու Նրա բարեկամը: Դա կարող է լինել, երբ դուք քայլեք փոշոտ փողոցով: Դա կարող է լինել, երբ դուք նստեք երկաթգծի մեքենան: Դա կարող է լինել, երբ դուք նստելու տեղ փնտրեք Եկեղեցու ժողովներին: Եթե դուք նայեք, դուք կտեսնեք ծանր բեռ կրող ինչ-որ մեկին: Դա կարող է լինել վշտի կամ միայնության, կամ զայրույթի բեռ: Դա կարող է լինել տեսանելի ձեզ համար միայն այն դեպքում, եթե դուք աղոթել եք, որ Հոգին ձեզ տա աչքեր՝ տեսնելու համար սրտերի ներսը, և խոստացել եք բարձրացնել ընկած ձեռքերը:

Ձեր աղոթքի պատասխանը կարող է լինել մի հին ընկերոջ դեմքը, ում դուք երկար տարիներ չեք տեսել, բայց ում կարիքները անսպասելիորեն

գալիս են ձեր մտքին ու սրտին, և զգում եք դրանք այնպես, կարծեք դրանք ձեր սեփականը լինեն: Ինձ հետ այդպես պատահել է: Հին ընկերները հասել են ինձ օգնության շատ հեռվից, երբ տարիներ շարունակ կապ չենք ունեցել իրար հետ, և միայն Աստված կարող էր նրանց հայտնած լիներ իմ բեռի մասին:

Աստծո ապրող մարգարեները խնդրել են մեզ լինել հավատարիմ բարեկամներ նրանց համար, ովքեր գալիս են Եկեղեցի որպես նորադարձներ, և գնալ փրկելու նրանց, ովքեր շեղվել են: Մենք կարող ենք դա անել, և մենք կանենք դա, եթե միշտ հիշենք Փրկչին: Երբ մենք օգնության ենք հասնում՝ աջակցելու ինչ-որ մեկին և բարձրացնելու նրա բեռը, Նա մեզ հետ է լինում: Նա կառաջնորդի մեզ նրանց մոտ, ովքեր կարիքի մեջ են: Նա կօրհնի մեզ զգալու այն, ինչ նրանք են զգում: Երբ մենք համառորեն ջանանք ծառայել նրանց, մեզ ավելի ու ավելի կտրվի նրանց հանդեպ Նրա սերը զգալու պարգևը: Այն մեզ քաջություն և ուժ կտա՝ կրկին ու կրկին հավատարմորեն օգնության հասնելու:

Եվ ժամանակի ու հավերժության մեջ, մենք կզգանք Նրա հավատարիմ բարեկամների ընկերակցության մեջ ընդունված լինելու ուրախությունը: Ես աղոթում եմ, որ բոլորս ունենանք այդ օրհնությունը, ինչպես և նրանք, ում մենք կծառայենք:

Ուսուցանում այս ուղերձից

Ընտանիքի անդամներին ներգրավելու համար նրանց խնդրեք փնտրել ինչ-որ բան սուրբ գրություններն ու մարգարեների խոսքերն ուսումնասիրելիս (տես *Teaching, No Greater Call* [1999], 55): Հոդվածը կարդալիս խնդրեք ընտանիքի անդամներին գտնել այն սկզբունքները, որոնք կօգնեն նրանց արժանի լինել կոչվելու Տիրոջ բարեկամը:

Teaching, No Greater Call-ում ասվում է, որ եթե դու ունես Քրիստոսանման սեր, դու ավելի լավ պատրաստված կլինես սովորեցնելու ավետարանը: Դու ներշնչված կլինես օգնելու ուրիշներին ճանաչել Փրկչին և հետևել Նրան (12): Հոդվածում գտեք սկզբունքներ, որոնք կօգնեն ձեզ լինել ավելի լավ տնային ուսուցիչ: Քննարկեք դրանք ձեր զուգընկերոջ հետ, և աղոթքով մտածեք, թե ինչպես կարող եք լինել «հավատարիմ բարեկամ» նրանց համար, ում ծառայում եք:

Երիտասարդներ

Նոր տղան

Մեթյու Օքեյբ

Ինձ համար դժվար էր նոր ծխում ընդունված զգալը: Իմ ընտանիքը վերջերս էր տեղափոխվել երկրի մի ծայրից մյուսը: Ծուխը, որտեղ մենք տեղափոխվել էինք, ուներ երիտասարդների մեծ խումբ, բայց սա առաջին անգամն էր, որ ես պետք է լինեի «նոր տղան»: Անենավատն այն էր, որ ես պետք է գնայի նոր դպրոց, և մի միտք անմիջապես ծագեց իմ մեջ. «Ու՞մ հետ եմ ես նստելու ճաշի ժամանակ»: Միգուցե ես կտեսնեմ եկեղեցուց ինչ-որ մեկին, բայց ես չէի ուզում բեռ դառնալ ինչ-որ մեկի համար ճաշի սեղանի շուրջ, հատկապես, որ ես չգիտեի նույնիսկ, թե արդյոք նրանք ուզում էին, որ ես այնտեղ լինեի:

Առաջին օրը դպրոցում ինձ համար շատ երկար թվաց: Վերջապես հնչեց ընդմիջման զանգը: Մինչ ես դանդաղ մտնում էի ճաշասրահ, ես աղոթեցի Երկնային Հորը օգնել ինձ գտնել ինչ-որ մեկին, ում ես ճանաչում էի: Ես արագ հայացք ձգեցի շուրջս՝ տեսնելու, թե կճանաչեի որևէ մեկին: Ոչ մեկը: Ուստի ես մոտեցա ճաշասրահի հեռու մի անկյունում գտնվող սեղանի և ճաշեցի:

Ավելի ուշ այդ օրը մաթեմատիկայի դասին ես նկատեցի մի ծանոթ դեմք: Այդ առավոտ ես տեսել էի Դեյվիդին սեմինարիայի ժամանակ: Նա խնդրեց ինձ տեսնելու իմ օրակարգը և պարզեց, որ երկուսս էլ ունեինք ճաշի նույն ժամը: «Հեյ, որտե՞ղ էիր դու այսօր ճաշին»- ասաց նա:

«Ես ուտում էի սենյակի հեռու մի անկյունում»,- պատասխանեցի ես:

«Լավ, վաղը ճաշին արի ու նստիր ինձ հետ»,- ասաց նա:

Ես շնորհակալ եմ սիրող Երկնային Հոր համար, ով գիտի յուրաքանչյուրիս կարիքը և ով պատասխանում է մեր բոլոր աղոթքներին: Ես նաև շնորհակալ եմ նրա համար, ով կամեցավ բարեկամության ձեռք մեկնել: Հասարակ մի բան, ինչպիսին հրավիրելն է, կարող է շատ բան փոխել:

Հիսուս Քրիստոս, Մեր Կատարյալ Ընկերը

Նախագահ Այրինգն ասել է, որ Հիսուսը մեր կատարյալ ընկերն է: Սհա մի քանի ճանապարհներ, որ ցույց են տալիս Հիսուսի կատարյալ ընկերությունը մեր հանդեպ:

Նա ցանկանում է ամենալավը մեզ համար:

Նա երջանիկ է, երբ մենք երջանիկ ենք:

Նա վշտանում է, երբ մենք տխուր ենք կամ վիրավորված:

Նա տառապեց մեր մեղքերի համար, որպեսզի մենք կարողանանք վերադառնալ Երկնային Հոր մոտ:

Լինել ընկեր Քրիստոսի համար

Նախագահ Այրինգն ասել է, որ մենք կարող ենք դառնալ Հիսուսի ընկերը՝ լինելով ընկեր ուրիշներին՝ հանուն Նրա: Նկարեք նկարներ այս չորս ճանապարհների վերաբերյալ, որոնցով դուք կարող եք լինել ընկեր:

Դուք կարող եք օգնել մեկին, ով տխուր է:

Դուք կարող եք ընկեր լինել մեկին, ով միայնակ է:

Դուք կարող եք հրավիրել որևէ մեկին գալ եկեղեցի:

Դուք կարող եք միշտ հիշել Հիսուսին:

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *First Presidency Message, July 2010*-ի թարգմանությունը: Armenian: 09367 201

Ամրացնել ընտանիքները և տները

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Սուրբ գրություններից.

Ծննդոց ԺԸ.19; Մոսիա 4.15; ՎևՈւ 93.40; Մովսես 6.55–58

Ամրանալ ամեն հնարավորության դեպքում

«Մեզնից յուրաքանչյուրը ընտանեկան տարբեր իրավիճակում է գտնվում: Որոշ ընտանիքներում կան մայր և հայր և երեխաներ: Որոշ զույքեր տանը այլևս երեխաներ չունեն: Եկեղեցու շատ անդամներ ամուրի են, ոմանք՝ միայնակ ծնողներ: Կան նաև միայնակ ապրող այրիներ:

Անկախ նրանից, թե ինչպիսին է մեր ընտանիքը, մենք բոլորս կարող ենք աշխատել ամրացնել մեր ընտանիքները կամ օգնել մյուսներին դա անել:

[Մի անգամ] ես մնացի իմ քրոջ աղջկա ու նրա ընտանիքի տանը: Այդ երեկո, մինչև երեխաները կգնային քնելու, մենք անցկացրեցինք կարճ ընտանեկան երեկո և սուրբ գրությունների ուսումնասիրություն: Նրանց հայրը պատմեց Լեքիի ընտանիքի մասին, թե ինչպես էր նա սովորեցնում իր երեխաներին այն մասին, որ նրանք պետք է ամուր բռնեին երկաթյա ձողից, որը Աստծո խոսքն է: Երկաթյա ձողից ամուր բռնելով նրանք ապահով կլինեին և կգնային դեպի ուրախություն և երջանկություն: Եթե նրանք բաց թողնեին երկաթյա ձողը, ապա կենթարկվեին կեղտոտ ջրերի գետում խեղդվելու վտանգին:

Երեխաներին այս ցուցադրելու համար նրանց մայրը դարձավ «երկաթյա ձողը», որից նրանք պետք է կառչեին, իսկ նրանց հայրը խաղաց սատանայի դերը, որը փորձում էր քաշել երեխաներին և հեռացնել ապահով ու երջանիկ վիճակից: Երեխաներին դուր եկավ պատմությունը և նրանք սովորեցին, թե որքան կարևոր է երկաթյա ձողից ամուր բռնելը: Սուրբ գրությունների պատմությունից հետո եկավ ընտանեկան աղոթքի ժամանակը: . . .

Սուրբ գրությունները, ընտանեկան երեկոն և ընտանեկան աղոթքը կամրացնեն ընտանիքները: Մենք պետք է օգտագործենք ամեն մի հնարավորություն, որպեսզի ամրացնենք ընտանիքները և օգնենք միմյանց մնալ ճիշտ ուղու վրա:[1]

Բարբարա Թոմփսոն, Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական:

Մեր պատմությունից

Հենց սկզբից էլ Սփոփող Միությունը պատասխանատվություն է ունեցել ամրացնել ընտանիքներն ու տները: Մարգարե Ջոզեֆը Սփոփող Միության վաղ ժողովներից մեկի ժամանակ սովորեցրել է քույրերին. «Երբ դուք տուն գնաք, երբեք չզայրանաք կամ չկոպտեք ձեր ամուսնուն, բայց թող այսուհետև բարությունը, գթությունը և սերը զարդարեն ձեր գործերը»:[2]

1914թ. Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը Սփոփող Միության քույրերին ասել է. «Որտեղ էլ որ կա անտեղյակություն կամ թեկուզ հասկացողության պակաս ընտանիքի վերաբերյալ, . . . այնտեղ է լինում կամ մոտ է այս կազմակերպությունը, և իսկական օժտումներով ու ոգեշնչմամբ, որ պատկանում են կազմակերպությանը, նրանք պատրաստվում են և հոժար են, որ իրենց ուսուցում տան՝ այդ կարևոր պարտականությունների վերաբերյալ»:[3]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Barbara Thompson, “His Arm Is Sufficient,” *Liahona,* May 2009, 84.
2. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 369
3. *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (1998), 186.

Ի՞նչ կարող ենք մենք անել

1. Ընտանիքները և տները ամրացնելու ի՞նչ գաղափարներ կկիսեք ձեր քույրերի հետ: Մինչ դուք խորհեք նրանց անհատական հանգամանքների շուրջ, Հոգին գաղափարներ կառաջացնի ձեր մտքում:

2. Ի՞նչ նախապատվություններ կարող եք դուք փոխել այս ամիս՝ ավելի լավ ամրացնելու ձեր իսկ ընտանիքը ու տունը:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *Visiting Teaching Message, July 2010*-ի թարգմանությունը: Armenian: 09367 201